ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

CHAIRMAN OF THE CENTRAL ELECTORAL COMMISSION
OF THE REPUBLIC OF ARMENIA

N 01/11/359

«31» 03 2026թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

*Ազգային ժողովի մեծարգո նախագահ*

*«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 132-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն՝ կից ներկայացնում եմ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության մասին» հաղորդումը, որը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգի համաձայն տեղադրվել է նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:*

***Հարգանքով՝*** **ՎԱՀԱԳՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

ՀՀ, ք. Երևան, 0009, Գ. Քոչարի 21ա, հեռ. +374 (10) 54 35 23
21a, G. Kochar Str., 0009, Yerevan, Armenia, tel.: +374(10) 54 35 23
Էլ. փոստ/E-mail: cec@elections.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՀԱՂՈՐԴՈՒՄ
# 2024-2025

www.elections.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՀԱՂՈՐԴՈՒՄ

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## 2024-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐ

**www. elections.am**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


*ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ* ..... 4

*1. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ* ..... 5

*1.1 ԸՆՏՐԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ* ..... 11

*1.2 ԱՐՏԱՔԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ* ..... 14

*2. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2024 ԹՎԱԿԱՆ* ..... 17

*2.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2024Թ. ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ* ..... 17

*3. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2025 ԹՎԱԿԱՆ* ..... 18

*3.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2025Թ. ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ* ..... 18

*4. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ 2024-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ* ..... 22

*5. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ* ..... 24

*6. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ* ..... 38

*7. ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ* ..... 55

*8. ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ* ..... 60

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, որպես անկախ պետական մարմին՝ կազմակերպում է Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, հանրաքվեները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 51-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներից որևէ մեկն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության մասին, իսկ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 132-րդ հոդվածի համաձայն. «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մինչև յուրաքանչյուր երկրորդ տարվա ապրիլի 1-ը, ինչպես նաև Ազգային ժողովի ընտրություններից հետո՝ մեկամսյա ժամկետում, Ազգային ժողով է ներկայացնում իր գործունեության վերաբերյալ հաղորդում»:

2024-2025 թվականների ընթացքում, Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան, կազմակերպվել և անցկացվել են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ Հայաստանի Հանրապետության 4 համայնքներում, որոնցից 3-ում՝ տեղական ինքնակառավարման մարմինների համամասնական ընտրակարգով ընտրություններ, իսկ 1 համայնքում՝ մեծամասնական ընտրակարգով ընտրություն:

# 1. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2025 թվականի ապրիլի 10-ի, թիվ 42-Ն որոշմամբ հաստատել է 2025-2028 թվականների զարգացման ռազմավարական պլանը (այսուհետ նաև՝ ռազմավարական պլան):

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025-2028 թթ. ռազմավարական պլանը ներառում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի առաքելությունը, գործունեության հիմնական ուղղությունները, առաջնահերթությունները, զարգացման տեսլականը, հիմնարար արժեքները, ռազմավարական նպատակները և հիմնական խնդիրներն ու գործողությունները: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ռազմավարական պլանը մշակվել է ընտրական համակարգի զարգացման, ընտրությունների կազմակերպման արդյունավետության բարձրացման և ընտրական գործընթացների նկատմամբ հանրության վստահությունն ամրապնդելու նպատակով:

Ձևավորված առաջնահերթությունները հնարավորություն կտան ուժեղացնել արդեն իսկ արդյունավետորեն իրականացվող գործընթացները՝ տեխնոլոգիական ոլորտում առկա զարգացումների և նորարարությունների կիրառմամբ ստեղծելով զարգացման նոր հիմքեր:

Ռազմավարական պլանի մշակման հիմքում դրվել են մի շարք բաղադրիչներ.

***Իրավիճակի վերլուծություն*** բաղադրիչի կիրառմամբ վերհանվել են խնդիրները, բացահայտվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության հիմնական մարտահրավերներն ու կարիքները:

***Ներքին և արտաքին միջավայրերի գնահատում*** բաղադրիչով իրականացվել է ներքին ռեսուրսների (մարդկային ռեսուրսներ, ենթակառուցվածքներ, ֆինանսական հոսքեր) և արտաքին գործոնների (ժողովրդագրական փոփոխություններ) ուսումնասիրություն:

***Միտումների վերլուծություն*** բաղադիչով դիտարկվել են ընտրական համակարգի առաջնահերթությունները:

***Փաստաթղթերի և փվյալների վերլուծություն*** բաղադրիչով իրականացվել է ներքին կարգավորումների վերլուծություն, ուժեղ կողմերի ու առկա բացերի գնահատում:

***Շահագրգիռ կողմերի ներգրավվածություն*** բաղադրիչով ապահովվել է շահագրգիռ կողմերի մասնակցությունը ռազմավարության մշակման գործընթացին:

**Ռազմավարական պլանի** մշակման հիմնական նպատակը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության երկարաժամկետ զարգացման ապահովումն էր:

Ռազմավարական պլանն ուղղված է.

- բարելավելու ընտրական գործընթացների կազմակերպման արդյունավետությունը,
- ապահովելու ընտրությունների ազատ և արդար անցկացումը,
- բարձրացնելու ընտրական համակարգի նկատմամբ հասարակության վստահությունը,
- զարգացնելու ընտրական կառավարման համակարգը:

Ռազմավարական պլանի համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի **առաքելությունն է՝** ժողովրդի իշխանության իրացման ապահովում՝ ազատ, արդար, թափանցիկ, մրցակցային և ժողովրդավարական, միջազգային չափանիշներին համապատասխանող ընտրությունների և հանրաքվեների միջոցով: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նաև պարտավորվում է ապահովել ընտրական իրավունքի այնպիսի սկզբունքները, ինչպիսիք են՝ ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքը, քվեարկության գաղտնիությունը, ընտրական իրավունքի պաշտպանությունը, ընտրական գործընթացների հրապարակայնությունը, թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

Ռազմավարական պլանի համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի **տեսլականն է՝** ժողովրդավարական ընտրություններ և հանրաքվեներ, որոնց նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման գործընթացն ընդունվում է հանրության կողմից, այսինքն ունենալ այնպիսի ընտրական համակարգ, որը կլինի թափանցիկ և վստահելի:

Տեսլականի հիմքում դրվել է հետևյալ գաղափարը. Հայաստանի Հանրապետությունում ձևավորել միջազգային չափորոշիչներին և ժողովրդավարական ընտրություններին համապատասխան ընտրական համակարգ, որը պետք է ապահովի քաղաքացիների ազատ կամարտահայտությունը և նպաստի Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների ձևավորմանն ու զարգացմանը:

***Ռազմավարական պլանի համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ռազմավարական հիմնական նպատակներ են.***

- ✓ **Ընտրական գործընթացների արդյունավետ կազմակերպում:**

Ապահովել միջազգային չափորոշիչներին համապատասխան ժողովրդավարական

ընտրությունների կազմակերպում և անցկացում՝ ՀՀ Սահմանադրությամբ, Ընտրական օրենսգրքով և իրավական այլ ակտերով սահմանված իրավակարգավորումներին համապատասխան:

- ✓ **Թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում:** Ապահովել ընտրական գործընթացների թափանցիկությունը, հաշվետվողականությունը, իրազեկվածությունը և ընտրական գործընթացի մասնակիցներին վերապահված վերահսկողության կառուցակարգերը՝ հասարակության վստահության բարձրացման նպատակով:
- ✓ **Տեխնոլոգիական զարգացում:** Ներդնել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ՝ ընտրական գործընթացների կազմակերպման լավարկման և կառավարման մեջ:
- ✓ **Ընտրողների կրթության և իրազեկման բարձրացում:** Իրականացնել ծրագրեր, որոնք կնպաստեն քաղաքացիների ընտրական գիտելիքների և մասնակցության բարձրացմանը:
- ✓ **Ընտրական հանձնաժողովների կարողությունների զարգացում:** Կազմակերպել վերապատրաստումներ և մասնագիտական հմտությունների զարգացում ընտրական գործընթացի շահառուների համար:

Ռազմավարական նպատակների իրականացման համար նախատեսվել են հետևյալ հիմնական ուղղությունները.

- ընտրական կառավարման համակարգի կատարելագործում,
- ընտրական օրենսդրության և գործընթացների զարգացում,
- տեղեկատվական տեխնոլոգիաների և էլեկտրոնային համակարգերի ներդրում,
- հասարակության հետ հաղորդակցության և համագործակցության զարգացում,
- ընտրական գործընթացների թափանցիկության ապահովում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ռազմավարական պլանով սահմանվել են վեց ռազմավարական հենասյուներ.

- Համընդգրկուն ընտրություններ,
- Ընտրական վարչարարության զարգացում,
- Ուսուցում և իրազեկում,
- Քվեարկության կատարելագործում,
- Ընտրական անվտանգություն,
- Արտաքին համագործակցություն:

***Համընդգրկուն ընտրություններ*** ռազմավարական հենասյան շրջանակներում ընտրողների մասնակցությունը խթանելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործողությունների ծրագիրը նախատեսում է մշակել երկարաժամկետ կտրվածքով մասնակցության աճ ապահովող ռազմավարություն, ինչպես նաև իրականացնել ընտրողների մասնակցության վրա ազդող գործոնների համապարփակ ուսումնասիրություն, որի արդյունքների հիման վրա մշակել թիրախային ծրագրեր՝ հաշվի առնելով տարածքային, տարիքային և այլ առանձնահատկությունները:

Գենդերային քաղաքականության իրականացման մասով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործողությունների ծրագիրը հետապնդում է հետյալ նպատակները՝ բացառել գենդերային խտրականությունը և խթանել գենդերային հավասարությունը ընտրական գործընթացի բոլոր ոլորտներում, խթանել կանանց մասնակցությունը ընտրական գործընթացում, ներառյալ՝ որպես թեկնածուներ, ընտրողներ և ընտրական վարչարարության ներկայացուցիչներ:

Երիտասարդների մասնակցությունը խթանելու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ստեղծել կրթական ծրագիր, որը կներառի դասախոսությունների, գործնական սեմինարների, գիտա-գործնական հանդիպումների և կլոր սեղանների կազմակերպում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչների ներգրավմամբ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործողությունների ծրագիրը ընտրական գործընթացներում ազգային փոքրամասնությունների ներգրավման համար հետապնդում է հետևյալ նպատակները՝ խթանել ազգային փոքրամասնությունների մասնակցությունն ընտրություններում՝ հաշվի առնելով լեզվական, մշակութային և ավանդական առանձնահատկությունները և խրախուսել ազգային փոքրամասնությունների մասնակցությունն ընտրական գործընթացում որպես թեկնածուներ, վստահված անձինք, դիտորդներ և ընտրական վարչարարության ներկայացուցիչներ:

***Ընտրական վարչարարության զարգացում:*** Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր գործունեությունն ապահովվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի միջոցով և, աշխատանքի արդյունավետության տեսանկյունից, զգալի կարևորություն ունի մարդկային ռեսուրսների բավարար քանակը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և աշխատակազմի պատրաստվածության աստիճանը, շարունակական կրթության ապահովման հնարավորությունը,

բարոյահոգեբանական վիճակը, լիազորությունների և պատասխանատվության համաչափ բաշխումը: Իր սահմանադրական անկախությունն ապահովելու, հաճախ փոփոխվող մարտահրավերներին ժամանակին և համահունչ արձագանքելու, մարդկային ռեսուրսներն արդյունավետ կառավարելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովին վերապահվեց լիազորություն իր աշխատակազմը ձևավորելու: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2025թ. հոկտեմբերի 14-ի N 60-Լ որոշմամբ հաստատել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կանոնադրությունն ու կառուցվածքը, որը համահունչ է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կարգավիճակին, լիազորություններին և դերին:

***Ուսուցում և իրազեկում:*** Ուսուցումն ընտրական գործընթացում ունի առանցքային դեր: Ուսուցումն ընտրական հանձնաժողովների անդամների, ինչպես նաև ընտրություններին մասնակցող այլ շահագրգիռ կողմերի և դերակատարների համար ոչ միայն նոր իրավական գիտելիքների ձեռքբերում է, այլ նաև՝ առանցքային միջոց կարողությունների և հմտությունների զարգացման համար, ինչն անհրաժեշտ է ընտրական օրենսդրության միատեսակ և անկողմնակալ կիրառման համար՝ նվազագույնի հասցնելով սխալներն ու բացթողումները: Ընտրական հանձնաժողովների անդամների, ինչպես նաև ընտրություններում ներգրավված այլ դերակատարների վերապատրաստումը կայուն ինստիտուցիոնալ հենքի վրա դնելու համար՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նախատեսում է հիմնել ուսումնական կենտրոն: Ռազմավարական այդ նպատակին հասնելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նախատեսում է իրականացնել միջազգային փորձի ուսումնասիրություն, հատկապես՝ այն երկրներում, որտեղ առկա են ուսումնական կենտրոններ, մշակել ուսումնական կենտրոնի գործունեության աշխատակարգը, գործառույթների և լիազորությունների շրջանակը, որպեսզի այդ ուսումնական և վերապատրաստման ծրագրերը վերաբերելի լինեն տարբեր շահառուների, այդ թվում՝ ընտրական հանձնաժողովների անդամներին, վստահված անձանց, դիտորդներին, ԶԼՄ ներկայացուցիչներին, երիտասարդներին, հաշմանդամություն ունեցող անձանց, ազգային փոքրամասնություններին, ընտրողներին, իրավապահ և տեղական ինքնակառավարման մարմիններին և այլ շահառուներին:

Այսօր՝ ամեն օր թվայնացվող աշխարհում, բավականին արդիական է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ռազմավարական պլանով սահմանված չորրորդ հենասյունը՝ ***բվեարկության կատարելագործումը***: Հայաստանի Հանրապետության կառավարությունը որդեգրել է ամբողջական կենսաչափական տվյալների համակարգի անցման

քաղաքականություն՝ նոր նույնականացման քարտերի ներդրմամբ: Հաշվի առնելով, որ ընտրողների ցուցակների և ընտրողների նույնականացման գործընթացի հետ կապված հարցերն ուղղակիորեն կապվում են բնակչության պետական ռեգիստրի, քաղաքացու անձը հաստատող փաստաթղթերի տեղեկատվական շտեմարանների հետ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր ուշադրության ներքո է պահում տեղի ունեցող փոփոխությունների գործընթացները, որպեսզի պատրաստ լինի հնարավոր փոփոխություններին և, անհրաժեշտության դեպքում, ձեռնարկի համապատասխան փոփոխություններ ընտրական գործընթացներում: Ժամանակին համընթաց լուծումներ առաջարկելու համար, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մշտապես ուսումնասիրում է միջազգային փորձը և նորամուծությունները:

Շրջակա միջավայրի բացասական հետևանքների նվազեցման նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նախատեսում է հավաքագրել և գնահատել օգտագործվող ցանկացած էկոլոգիապես գիտակցված քաղաքականություն, մշակել բնապահպանական նվազագույն վնասակար ազդեցություն ունեցող գործողությունների քարտեզ՝ երկարաժամկետ և կարճաժամկետ ազդեցության գնահատմամբ, պլանավորել քաղաքականություն՝ գնումների գործընթացների, ֆինանսավորման, ինֆորմացիոն և հաղորդակցության տեխնոլոգիաների, լոգիստիկայի (տրանսպորտ), ընտրողների կրթության, քվեարկության տպագիր նյութերի, սարքավորումների և ապրանքների, գրասենյակային տարածքների և պահեստավորման վերաբերյալ, ինչպես նաև իրականացնել ներքին գնահատում՝ ժամանակի ընթացքում շրջակա միջավայրի վրա հետևանքների նվազեցման աճին հետևելու համար:

## 1.1 ԸՆՏՐԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Կիբեռսպառնալիքների արագ փոփոխվող միջավայրը պահանջում է, որ պետական կառավարման և ընտրակա

ն մարմինները մշտապես հետևեն ոլորտային զարգացումներին, ինչպես նաև հատուկ ուշադրություն դարձնեն նոր զարգացող տեխնոլոգիաներին և մարտահրավերներին: Լավագույն փորձը ցույց է տալիս, որ ընտրությունների պաշտպանությունը կիբեռսպառնալիքներից և ապատեղեկատվական արշավներից ներառում է ընտրական կառավարման մարմինների և կիբեռանվտանգության քաղաքականության ու իրականացման համար պատասխանատու այլ պետական գերատեսչությունների կարողությունների մեկտեղում՝ միևնույն ժամանակ ապահովելով միջգերատեսչական ակտիվ համագործակցություն:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը և «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամը 2025 թվականի մայիսի 7-ին ստորագրել են փոխըմբռնման հուշագիր, որի նպատակն է ամրապնդել փոխգործակցությունը և.

- տրամադրել մասնագիտական աջակցություն թվային գործիքակազմերի բարելավման, կիբեռանվտանգության բարձրացման և նախանշված ստանդարտներին համապատասխանեցման աշխատանքներում,
- աջակցել ընտրական համակարգի տեխնոլոգիական զարգացմանը,
- կիրառել նորարարական լուծումներ, որոնք կնպաստեն ընտրական գործընթացների արդյունավետության, թափանցիկության և անվտանգության բարձրացմանը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի համագործակցությունը նախատեսվում է իրականացնել հետևյալ ուղղություններով.

- **Տեխնոլոգիական նորարարությունների կիրառում:** Աջակցություն ընտրական գործընթացներում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը և զարգացմանը:
- **Թվային համակարգերի զարգացում:** Համագործակցության շրջանակներում մշակվում և կատարելագործվում են ընտրական տվյալների կառավարման թվային համակարգերը:

- **Մասնագիտական խորհրդատվություն:** Մասնագիտական աջակցության և խորհրդատվության տրամադրում ընտրական տեխնոլոգիական լուծումների մշակման և ներդրման գործում:
- **Տեղեկատվական անվտանգության բարձրացում:** Ընտրական համակարգերում տվյալների անվտանգության և պաշտպանվածության մակարդակի բարձրացում:

«Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կարիքները և նպատակները սպասարկող կիբեռանվտանգության, կիբեռհիգիենայի և կիբեռվարքագծի մշակույթի զարգացումը և հետագա պահպանումը: Կիբեռանվտանգության մշակույթի զարգացման շրջանակներում անցկացվել են մի շարք միջոցառումներ, հանդիպումներ իրազեկվածության բարձրացման, կրթական և վերապատրաստման ենթաբաղադրիչների ուսուցման նպատակով:

Կիբեռանվտանգության պատասխանատուների մշտադիտարկումների արդյունքում պարբերաբար ուսումնասիրվել և իրականացվել են նոր նախագծեր, կատարվել է կարիքների գնահատում:

Ընտրական անվտանգություն բաղադրիչի կարևորագույն կետերից է ապատեղեկատվության դեմ պայքարը, ուստի ընտրական համակարգի և ընտրական գործընթացների դեմ ուղղված ապատեղեկատվությանը հակազդելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մշակել է քաղաքականություն և գործողությունների ծրագիր: Նշված քաղաքականության շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանվել են մի շարք ռազմավարական խնդիրներ, որոնցից են՝

- ձևավորել ապատեղեկատվության ներքին արձագանքման թիմ (ԱՆԱԹ), որում ներգրավված կլինեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչներ՝ ընտրված ընտրական գործընթացներում ամենատարբեր գործառույթ կրող ստորաբաժանումներից,
- համագործակցություն համանման խնդիրներով զբաղվող պետական այլ գերատեսչությունների և/կամ նրանց ստորաբաժանումների հետ՝ հստակեցնելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովին վերաբերվող խնդիրների տիրույթը և ձևավորելով արդյունավետ փոխգործակցության կառուցակարգեր,
- համագործակցություն քաղաքացիական հասարակության հետ, մասնավորապես, փաստերի ստուգման հարթակների, ինչպես նաև փաստահեն լրագրողական համայնքի:

Լրագրողների համար առանձին կամ այլ կազմակերպությունների հետ համատեղ վերապատրաստման ծրագրերի մշակում և իրականացում:

## 1.2 ԱՐՏԱՔԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ընտրական համակարգի զարգացման և արդիականացման գործում կարևոր դեր և  նշանակություն ունի համագործակցությունը, ինչպես ներպետական  գերատեսչությունների և կազմակերպությունների հետ, այնպես էլ միջազգային կազմակերպությունների հետ:

Ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում միջգերատեսչական համագործակցությունն իրականացվում է ընտրական գործընթացի կազմակերպման բարելավմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների, փորձարարական ծրագրերի, տեղեկատվական համակարգերի բարելավման և կատարելագործման շրջանակներում: Այն երաշխավորում և ապահովում է սահմանված ընթացակարգերով և ժամկետներում ընտրությունների և  ընտրական գործընթացների կազմակերպումը՝ նվազագույնի հասցնելով ի հայտ եկող մարտահրավերներն ու խնդիրները:

Միջազգային համագործակցություններից է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի շրջանակներում համատեղ իրականացվող «Արտեմիս» ծրագիրը: Ծրագրի հիմնական նպատակներն են.

- բարձրացնել ընտրական գործընթացների թափանցիկությունն ու վստահելիությունը,
- զարգացնել ընտրական կառավարման տեխնիկական և ինստիտուցիոնալ կարողությունները,
- աջակցել ընտրողների կրթության և իրազեկման ծրագրերին,
- խթանել ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը ընտրական գործընթացներում,
- ապահովել ներառական, թափանցիկ և կայուն ընտրական գործընթացներ,
- նպաստել ընտրական վարչարարության արդյունավետությանը:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են մի շարք կարևոր միջոցառումներ.

1. ***Ընտրական կառավարման կարողությունների զարգացում.*** կազմակերպվել են վերապատրաստումներ ընտրական հանձնաժողովների անդամների համար:
2. ***Տեխնոլոգիական զարգացում.*** ներդրվում և բարելավվում են տեղեկատվական համակարգեր, որոնք ապահովում են ընտրական տվյալների անվտանգ և արդյունավետ կառավարումը:

3. ***Հանրային իրազեկում և ընտրողների կրթություն.*** իրականացվում են կրթական և տեղեկատվական ծրագրեր՝ բարձրացնելու քաղաքացիների ընտրական գիտելիքները:

«Արտեմիս» ծրագրի շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կարևորագույն գործընկեր է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, որն աջակցում է ընտրական համակարգի զարգացմանն ու ընտրական գործընթացների արդյունավետ կազմակերպմանն ուղղված գործընթացներին: «Արտեմիս» ծրագրի հիմնական դոնորներն են՝ Եվրոպական միությունը (EU), Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը, Նիդերլանդների Թագավորությունը, Շվեդիայի Թագավորությունը, Շվեյցարիայի Համադաշնությունը:

Միջազգային համագործակցություններից Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կարևորում է երկարամյա և շարունակական համագործակցությունը Ընտրական համակարգերի միջազգային հաստատության (The International Foundation for Electoral Systems IFES) հայաստանյան գրասենյակի, ժողովրդավարության և ընտրական աջակցության միջազգային ինստիտուտ (International Institute for Democracy and Electoral Assistance (IDEA) կազմակերպության հետ:

Ընտրական գործընթացների նկատմամբ վտանգների ընկալման, տեղեկատվական անվտանգության խնդիրների կառավարման, ինչպես նաև այդ ոլորտում ունակությունների զարգացման նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովը համագործակցել է Ֆոլկե Բերնադոտ ակադեմիայի (Folke Bernadotte Academy (FBA)-ի հետ: Համագործակցության շրջանակում կազմակերպվել են սեմինարներ և աշխատաժողովներ:

2024 թվականի հոկտեմբերի 22-ից Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հանդիսանում է Ընտրական մարմինների համաշխարհային ասոցիացիայի (A-WEB) լիիրավ անդամ՝ միաժամանակ ընդգրկվելով այդ կառույցի գործադիր խորհրդում:

2024 թվականի հոկտեմբերի 20–25-ին Բենինի Հանրապետությունում կայացած տարեկան համաժողովի նիստում, որին մասնակցել են մոտ 33 ֆրանկոֆոն երկրների ընտրական մարմիններ, հաստատվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամակցությունը Ֆրանկոֆոնիայի ընտրական հմտությունների ցանցին (RECEF -Réseau des compétences électorales francophones): Ֆրանկոֆոնիայի ընտրական հմտությունների ցանցը ֆրանկոֆոն երկրների ընտրական մարմինների և մասնագետների միջպետական ցանց է, որը միավորում է ֆրանսախոս երկրների ընտրական մարմինների փորձի փոխանակման, վերապատրաստման, աշխատաժողովների և համատեղ ծրագրերի համար:

2024–2025 թվականներին ԿԸՀ-ն ակտիվ մասնակցություն է ունեցել տարբեր միջազգային ծրագրերի, համաժողովների, աշխատաժողովների ու փորձի փոխանակման միջոցառումների: Դիտարկել է Ալբանիայի, Կոսովոյի, Ռումինիայի Վրաստանի, Մոլդովայի, Ղազախստանի, Ռուսաստանի և ԱՄՆ-ում կայացած ընտրությունները:

# 2. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ - 2024 ԹՎԱԿԱՆ

## 2.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2024Թ. ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընտրական օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի հերթական ընտրություններ կարող են անցկացվել տարին մինչև չորս անգամ: Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի հերթական ընտրությունների քվեարկության օրերը յուրաքանչյուր տարվա համար սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր 2023թ. նոյեմբերի 10-ի թիվ 68-Ա որոշմամբ 2024 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր էր սահմանել՝ 2024 թվականի մարտի 31-ը, 2024 թվականի հունիսի 9-ը, 2024 թվականի հոկտեմբերի 20-ը:

2024 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ են անցկացվել մեկ համայնքում:

2024 թվականի հոկտեմբերի 20-ին Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքում անցկացվել են Ֆերիկ համայնքի ղեկավարի մեծամասնական ընտրակարգով ընտրություններ:

2024 թվականի հոկտեմբերի 20-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքում տեղի ունեցած համայնքի ղեկավարի ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչական դատարան հայցադիմում չի ներկայացվել:

2024 թվականի հոկտեմբերի 20-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքում տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում թիվ 15 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով դիմումներ (բողոքներ) չեն ներկայացվել: Սահմանված ժամկետում ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի կամ տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումներ չեն ստացվել: 2022 թվականի մարտի 27-ին կայացած Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի ղեկավարի ընտրությունների շրջանակներում ձևավորված թիվ 15/1 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում գրառումներ առկա չեն եղել, և դրա վերաբերյալ թիվ 15 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը 2024

թվականի հոկտեմբերի 22-ին կազմել է արձանագրություն: 2024 թվականի հոկտեմբերի 20-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքում տեղի ունեցած համայնքի ղեկավարի ընտրությունների արդյունքները դատական կարգով չեն բողոքարկվել:

# 3. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2025 ԹՎԱԿԱՆ

## 3.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2025Թ. ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2024թ. հոկտեմբերի 28-ի թիվ 9-Ա որոշմամբ սահմանվել են 2025 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրերը, այն է՝ 2025 թվականի մարտի 30-ը, 2025 թվականի հունիսի 8-ը, 2025 թվականի հոկտեմբերի 5-ը, 2025 թվականի նոյեմբերի 16-ը:

2025 թվականի ընթացքում նշված որոշմամբ սահմանված օրերին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ են անցկացվել թվով 3 համայնքներում:

2025 թվականի մարտի 30-ին Շիրակի մարզի Գյումրի համայնքում և Արմավիրի մարզի Փարաքար համայնքում անցկացվել են համայնքի ավագանու ընտրություններ:

ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 12-ի N 1939-Ա որոշմամբ վաղաժամկետ դադարեցվել են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու լիազորությունները, և ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 12-ի N 1951-Ն որոշմամբ նշանակվել են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու արտահերթ ընտրություններ: Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 13-րդ կետերով, 128-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 12-ի N 1951-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր 2025 թվականի հունվարի 20-ի N 2-Ա որոշմամբ 2025 թվականի մարտի 30-ը նշանակել է որպես Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու արտահերթ ընտրության անցկացման օր և հաստատել է Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ի

արտահերթ ընտրության նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը:

ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 16-ի N 34-Ն որոշմամբ վաղաժամկետ դադարեցվել են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու լիազորությունները և նշանակվել են ավագանու արտահերթ ընտրություններ: Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 13-րդ կետերով, 128-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունվարի 16-ի N 34-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր 2025 թվականի հունվարի 20-ի N 1-Ա որոշմամբ 2025 թվականի մարտի 30-ը նշանակել է որպես Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու արտահերթ ընտրության անցկացման օր և հաստատել է Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ի արտահերթ ընտրության նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը:

2025 թվականի նոյեմբերի 16-ին Արմավիրի մարզի Վաղարշապատ խոշորացված համայնքում համամասնական ընտրակարգով անցկացվել են համայնքի ավագանու ընտրություններ: Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքում համամասնական ընտրակարգով ավագանու ընտրությունները նշանակվել են ՀՀ Արմավիրի մարզպետի 2025 թվականի օգոստոսի 12-ի N ՄՈ/789-Ա որոշմամբ:

Ընտրությունները կազմակերպվել և անցկացվել են Ընտրական օրենսգրքով ամրագրված իրավակարգավորումներին համապատասխան, որոնք ապահովում են լիակատար թափանցիկություն ընտրական գործընթացների բոլոր փուլերի համար՝ ընտրական գործընթացի բոլոր մասնակիցներին ընձեռելով վերահսկողության հնարավորություն:

Շիրակի մարզի Գյումրի համայնքի և Արմավիրի մարզի Փարաքար և Վաղարշապատ համայնքների համամասնական ընտրակարգով ընտրությունների շրջանակներում իրականացվել է ընտրական տեղամասերից քվեարկության ընթացքի և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի տեսանկարահանում և միաժամանակյա համացանցային հեռարձակում՝ ուղիղ ժամանակային ռեժիմում: Միևնույն ժամանակ, նշված ընտրություններին ապահովվել է Ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի պահանջի

կատարումը և տեսանկարահանվել ու հեռարձակվել են նաև ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նիստերը և վերահաշվարկի աշխատանքները:

***2025 թվականի մարտի 30-ին Շիրակի մարզի Գյումրի համայնքում ավագանու ընտրությունների*** շրջանակներում տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի որևէ դիմում թիվ 31 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում չի ստացվել: Թիվ 31 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից իրականացվել է ընդհանուր թվով 7 ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքների վերահաշվարկ, այն է՝ վիճակահանությամբ ընտրված երեք ընտրական տեղամասերի՝ թիվ 31/78, 31/22, 31/66 և սեփական նախաձեռնությամբ վերահաշվարկ կատարելու մասին 2025 թվականի ապրիլի 1-ի N 16-Ա որոշմամբ սահմանված չորս ընտրական տեղամասերի՝ թիվ 31/67, 31/70, 31/50, 31/41: Վերահաշվարկի արդյունքներով թիվ 31 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրել է, որ վերահաշվարկի արդյունքում ընտրությունների արդյունքներում որևէ էական փոփոխություններ չեն կատարվել:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ի արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչական դատարան հայցադիմում չի ներկայացվել: 2025 թվականի մարտի 30-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում թիվ 31 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվել է թվով 7 դիմում, որոնց ուսումնասիրությամբ թիվ 31 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, ըստ անհրաժեշտության, ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 8-րդ մասով, օպերատիվ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ ձեռնարկել է համապատասխան միջոցներ և իրազեկել դիմումատուներին:

2025 թվականի մարտի 30-ին Շիրակի մարզի Գյումրի համայնքում տեղի ունեցած ավագանու ընտրությունների շրջանակներում ձևավորված թվով 82 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններից միայն 25 գրանցամատյաններում են առկա եղել թվով՝ 55 գրառումներ:

Թիվ 31 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է 2025 թվականի մարտի 30-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու արտահերթ ընտրությունների կազմակերպման և

անցկացման նպատակով կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 2025 թվականի մարտի 30-ին արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները և 2025թ. ապրիլի 4-ին ընդունել է թիվ 17-Ա որոշումը, ըստ որի՝ արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականներն ընտրությունների արդյունքների վրա որևէ ազդեցություն չեն ունեցել:

***2025 թվականի մարտի 30-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու արտահերթ ընտրությունների*** նախապատրաստման և անցկացման ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչական դատարան հայցադիմում չի ներկայացվել:

2025 թվականի մարտի 30-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում իրավասու սուբյեկտների կողմից թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով դիմումներ (բողոքներ) չեն ներկայացվել:

2025 թվականի մարտի 30-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու արտահերթ ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորված թվով 16 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններից թվով 9 գրանցամատյաններում առկա են եղել թվով 26 գրառում, որոնց ուսումնասիրության արդյունքում 2025թ. ապրիլի 3-ին ընդունվել է թիվ 11-Ա որոշումը, ըստ որի՝ արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականներն ընտրությունների արդյունքների վրա որևէ ազդեցություն չեն ունեցել:

***Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 16-ի ընտրությունների*** նախապատրաստման և անցկացման ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչական դատարան հայցադիմում չի ներկայացվել: Ընտրությունների արդյունքներն ամփոփելուց հետո մեկ հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան, որը վարույթ չի ընդունվել:

2025 թվականի նոյեմբերի 16-ին Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում իրավասու սուբյեկտների կողմից թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվել է թվով 3 դիմում (բողոք), որոնցից երկուսին պատասխանվել է գրությամբ, իսկ մեկ դիմումով հարուցվել է վարչական

վարույթ, որի արդյունքում թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից կայացվել է 2025 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 33-Ա որոշումը:

Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետում թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվել է թվով 3 դիմում՝ թիվ 14/15, 14,16 և 14/22 տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկ կատարելու պահանջով: Նշված 3 տեղամասերում, ինչպես նաև վիճակահանությամբ որոշված թիվ 14/1, 14/8 և 14/22 տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկի արդյունքում արձանագրվել է միայն անվավեր քվեաթերթիկների նվազում: Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ չի իրականացրել քվեարկության արդյունքների վերահաշվարկ:

2025 թվականի նոյեմբերի 16-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորված թվով 47 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններից թվով 31 գրանցամատյաններում առկա է եղել թվով 109 գրառում, որոնց ուսումնասիրությամբ 2025թ. նոյեմբերի 21-ին թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ընդունել է թիվ 35-Ա որոշումը, ըստ որի՝ գրանցամատյաններում արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականներն ընտրությունների արդյունքների վրա որևէ ազդեցություն չեն ունեցել:

## 4. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ 2024-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

2024-2025 թվականների ընթացքում կազմակերպված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում շարունակվել են կիրառվել տեխնիկական սարքավորումները, որոնց միջոցով իրականացվել է ընտրողների նույնականացումն ու գրանցումը և ընդհանուր թվով 145 ընտրական տեղամասերում ընտրողների գրանցումն իրականացվել է ընդհանուր թվով 341 տեխնիկական սարքավորումների կիրառմամբ:

Տեխնիկական սարքավորումների անհրաժեշտ քանակի ստուգման և կոմպլեկտավորման աշխատանքներն յուրաքանչյուր ընտրության համար իրականացվել են առանձին: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ տեխնիկական սարքավորումների կիրառումն ու սպասարկումն իրականացվել է

բացառապես՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և տեղական մասնագետների կողմից:

Տեխնիկական սարքավորումների մեջ ներբեռնվող՝ էլեկտրոնային եղանակով կազմված ընտրողների ցուցակները քվեարկության օրվանից 8 օր առաջ, լիազոր մարմնի կողմից տրամադրվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հատուկ ծրագրային ապահովմամբ կազմակերպել է ընտրողների էլեկտրոնային ցուցակների բաժանումն՝ ըստ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքների և ներբեռնումը տեխնիկական սարքավորումների հիշողության կրիչների վրա:

Ընդհանուր թվով 145 ընտրական տեղամասերից՝ ընդամենը 4 տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործվել է մեկ տեխնիկական սարքավորում, իսկ թվով 141 տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործվել են մեկից ավելի տեխնիկական սարքավորումներ՝ 79-ում՝ 2-ական տեխնիկական սարքավորում, 62-ում՝ 3-ական տեխնիկական սարքավորում, որոնց աշխատանքը եղել է սինքրոնիզացված, ինչը հնարավորություն է տվել ընտրողին գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովում օգտագործվող տեխնիկական սարքավորումներից յուրաքանչյուրով, բացառելով նաև նույն ընտրողի կրկնակի գրանցման հնարավորությունը մյուս տեխնիկական սարքավորման միջոցով: Քվեարկության օրը թվով 145 տեղամասային ընտրական հանձնաժողովներում ընտրողների գրանցումն իրականացվել է տեխնիկական սարքավորումների միջոցով: Բոլոր ընտրական տեղամասերում մինչ քվեարկության մեկնարկը տպվել են գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքները, իսկ քվեարկության ավարտից հետո՝ տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների վերաբերյալ՝ Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված տեղեկանքները:

Ընտրական օրենսգրքով սահմանված կարգի համաձայն՝ քվեարկության ավարտից հետո, տեխնիկական սարքավորումների հիշողության կրիչներում առկա ընտրությունների մասնակցության և ընտրողների մատնահետքերը պարունակող տեղեկատվությունը ներմուծվել է համակարգիչներ և Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետների պահպանմամբ փոխանցվել Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետների համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից պատրաստվել և հրապարակվել է առանձին ձեռնարկ և հուշաթերթ:

# 5. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ, ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մշակում և հրապարակում է ուսումնական նյութեր՝ ընտրական հանձնաժողովների անդամների, մասնագետների, թեկնածուների, վստահված անձանց, դիտորդների և ընտրողների համար:

Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով ընտրողները տեղեկացվել են ընտրական հանձնաժողովների կազմերի, գտնվելու վայրերի, աշխատաժամերի, ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների, թեկնածուների առաջադրման և գրանցման ժամկետների, քվեարկության օրվա, տեղի, ժամանակի, քվեարկության և ընտրությունների արդյունքների մասին:

2024-2025 թվականներին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հրապարակվել է ուղեցույց և ուսումնական ձեռնարկ (հուշաթերթ)՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների և տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետների համար, ուղեցույց թույլ տեսողության պատճառով քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար (նշված ուղեցույցը հրապարակվել է նաև բրայլյան այբուբենով), քվեարկության կարգի և քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ՝ հաշմանդամություն ունեցող ընտրողների ընտրական իրավունքի իրացումն ապահովելու համար: Մասնավորապես, նախապատրաստվել է քվեարկության կարգի, ինչպես նաև քվեարկության կարգը պարզաբանող հանրային իրազեկման թերթիկների տպագրությունը՝ խոշորացված տառատեսակով և բրայլյան գրով:

Համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների ժամանակ բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովներին (Գյումրիում 82, Փարաքարում 16 և Վաղարշապատում 47) տրամադրվել են կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների անվանումների ու հերթական համարների բրայլյան տպագրությամբ թերթիկներ և հատուկ բրայլյան ստվարաթղթե կաղապարներ՝ նախատեսված քվեաթերթիկների համար, որոնք ապահովում են ինքնուրույն քվեարկության իրականացումը, իսկ մեծամասնական ընտրակարգով անցկացվող ընտրության ժամանակ տրամադրվել են խոշորացույցներ:

Ընտրական տեղամասերի ձևավորման փուլում ստացվել և սահմանված ժամկետում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում ներբեռնվել է մատչելի տեղամասային կենտրոնների ցանկը:

2025 թվականի ընթացքում կազմակերպված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ Գյումրիում կազմավորված թվով 82 տեղամասային կենտրոններից՝ 32 եղել են մատչելի, Փարաքարում՝ թվով 16 տեղամասային կենտրոններից՝ 9, իսկ Վաղարշապատի թվով 47 տեղամասային կենտրոններից մատչելի են եղել 20-ը: Մատչելի տեղամասային կենտրոնների վրա փակցվել են մատչելիության վերաբերյալ համապատասխան տարբերանշաններ:

Ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ՝ հաշմանդամություն ունեցող ընտրողների ընտրական իրավունքի իրացումն ապահովելու համար, մասնավորապես՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները ձեռնարկել են համապատասխան բարելավումներ՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց հասանելիությունը, ժամանակավոր թեքահարթակների տեղադրման, քվեարկության սենյակը երկրորդ հարկից առաջին հարկ տեղափոխման միջոցով:

Ընտրական օրենսգիրքը սահմանում է այն անձանց շրջանակը, ովքեր կարող են մասնակցել ընտրական հանձնաժողովների նիստերին: Ընտրական հանձնաժողովների նիստերը հրավիրվել և անցկացվել են Ընտրական օրենսգրքի հիմնարար սկզբունքներին՝ (հրապարակայնություն, թափանցիկություն) համապատասխան: Բոլոր նիստերի վերաբերյալ առկա են եղել հրապարակային ծանուցումներ, նիստերն անցկացվել են բաց, առկա չէ գեթ մեկ դեպք, երբ որևէ իրավասու անձի թույլ չի տրվել մասնակցել հանձնաժողովների նիստերին:

## ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
## 2025Թ. ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### Տեղեկատվություն ընտրությունների վերաբերյալ

| Մարզ | Համայնքների թիվը, որտեղ կայացել են ընտրություններ | Համայնքի ղեկավար | | Ավագանու անդամի | | Համամասնական ընտրակարգով | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդամենը | որից՝ արտա-հերթ | Ընդամենը | որից՝ արտա-հերթ | Ընդամենը | որից՝ արտա-հերթ |
| Արմավիր | 2 | 0 | 0 | 0 | 0 | 1 | 1 |
| Շիրակ | 1 | 0 | 0 | 0 | 0 | 1 | 1 |
| **Ընդամենը** | **3** | **0** | **0** | **0** | **0** | **2** | **2** |

### Տեղեկատվություն կազմավորված տեղամասերի, ընտրողների թվի և քվեարկության մասնակիցների վերաբերյալ

| *Մարզ* | Համայնքների թիվը, որտեղ կայացել են ընտրություններ | Տեղամասերի թիվը | Ընտրող-ների թիվը | Քվեարկության մասնակիցների թիվը | % |
|---|---|---|---|---|---|
| *Արմավիր* | 2 | 63 | 90928 | 43063 | 60.16 |
| *Շիրակ* | 1 | 82 | 111271 | 47434 | 42.43 |
| ***Ընդամենը*** | **3** | **145** | **202199** | **90497** | **45.43** |






## Տեղեկատվություն ընտրողների և քվեարկության մասնակիցների վերաբերյալ՝ ըստ սեռի

| | ընտրողներից՝ իգական % | որից՝ մասնակցել են, % | ընտրողներից՝ արական % | որից՝ մասնակցել են, % |
|---|---|---|---|---|
| Արմավիր | 52.72 | 42.97 | 47.28 | 51.22 |
| Շիրակ | 55.03 | 42.77 | 44.97 | 42.43 |
| Ընդամենը | 53.99 | 42.86 | 46.01 | 46.49 |









## ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### ԸՍՏ ՏԱՐԻՔԻ ԵՎ ՍԵՌԻ

| Համայնք | ընտրա-տարածք | իգական | այդ թվում` նախագահ | այդ թվում` քարտուղար | արական | 18-35 | 35-50 | 50-65 | 65+ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
